

## ԹՎԻ ԽՈՐՅՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՍԹԸ ԲԻԹԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ «ՀԱՄԱԴԱՏ ԱՍՏՈՒՏԾԱՇՈՒՆՉ» ԶԵՂԱԳՐՈՒՄ (ԹԻՎ 551)<sup>1</sup>

ԱՆՈՒԾ ՍԱՐԳԱՅԱՆ  
աստիրանուց  
Մատենադարան

Դուքլինի Զեսթըր Բիթի գրադարանի 551 համարի հայերեն ձեռագիրը «Նամառաւ Աստուածաշունչն»<sup>2</sup> է, որը, ըստ Էռլյան, Աստվածաշնչից վերցրած ազգաբանություն է և զավականագիրը:

Ձեռագրի բովանդակությունը բաղկացած է հիմնականում ծառ-աղյուսակներից, ինչպես նաև թեմային վերաբերող այլ սխեմատիկ աղյուսակներից ու տարաբնույթ նկարագրումներից (ամբողջ էջով ու միջտերստային մանրանկարներ, մեղալիոնների մեջ դատկերված դիմանկարներ և օրնամենտալ ձևավորումներ) (նկ. 1): Աղյուսակների մեջ տերստերը միջանկյալ դիրք են գրավում եւ դարունակում են ծառում նշված անունների կենսագրությունները կամ տերստի հետ կայդված որոշ բացատրություններ: Վերջիններիս շարքում է «դարագլուխներ»<sup>3</sup> անունով հայտնի տերստը, որտեղ աստվածաշնչյան դատմությունը բաժանված է դարբերաշրջանների:

Գոյություն ունեն դարագլուխների բանակի և Ժամանակային կտրվածքի տարբեր ընկալումներ, որի դատճառով է դարականոն գրականության մեջ առկա են դարագլուխների տարբերակներ: Մեր տարբերակն ունի ոյթ շրջափոլ, որի դարբերացումը ձեռագրում բացատրվում է հետևյալ կերպ. «...Եւ աստ (իմա՝ Ենորով-Ա. Ա.) կատարեցաւ առաջին դարն՝ի Յադամա ի յԵնովք: Երկրորդն՝ի ջրհեղեղն: Երրորդն՝ի յաշտարակն: Չորրորդն՝ի յԱրքահամ: Տիմզերորդն՝ի շինույին տաճարին: Վեցերորդն ի մարմնանազ Տեսան մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Երեքրդն ըստ ոմանց զկոչումն հեթանոսաց ասեն ի հաստան Քրիստոսի և Յուղերորդն զալուստն Քրիստոսի: Եւ զիտելի Ե՛զի ոչ են դարձու ի համարս ամաց Ո-աց<sup>4</sup>, այլ բարձեղեաց և նշանաց ՚ի սմա զործելոց» (Էջ 8):

Առաջին դարագլուխն անձնավորվում է Ենորով, և մեր այս մեջբերած հատված-բացատրությունն է կցված է նրա կենսագրականին: Բացի դարագլուխների բաժանման այս բացատրությունից, կա նաև ուրիշ մեկը. Քրիստոսի խաչելությանը վերաբերող «Վշտացյալ Քրիստոս» մեղալիոնով դատկերի մեկնարանության մեջ ասվում է, որ տվյալ իրադարձությամբ ավարտվում է «Վեցերորդ դարը». «Աստ կատարի Զ(6) դարն ըստ երրայեցոցն որ է ամք ԻԼԳ և ամիս Գ (7033 տարի 3 ամիս, - Ա.Ա.)» (Էջ 30):

Ինչպես տեսնում ենք, այս մեջբերումները վկայում են, որ բովանդակու-

թյունը իսկաղես ենթարկված է դարբերացման: Իսկ «Վշտացյալ Քրիստոս» դատկերի մեկնարանությունը ցոյց է տալիս, որ մանրանկարը այդ հաճակարգի մաս է կազմում:

Մենք կփորձենք ձեռազրի ընդհանուր մանրանկարչությունը դիտարկել այդ սկզբունքով՝ դարագլուխների հաճատեքստում:

Այս «Նամառաւ Աստուածաշունչը» կարելի է ենթարկել հետևյալ թեմատիկ բաժանմանը.

«Երկնային Երուսաղեմ» ամրող էջով մանրանկար (Էջ 4)

Նախադրություն-նախարան և Աստվածաշնչի գրքերի ցանկ (Էջ 5-6)

Աղամի ու Եվայի մեղսագործությունից մինչև Քրիստոսի խաչելություն (Էջ 7-30), Քրիստոսի ծննդարանությունը առանձնացված և ընդգծված է Դավիթ թագավորի հայր Շեսեից,

Առաջալների ու աշակերտների դիմանկարներ ու դրանց ուղեկցող վարքեր (Էջ 31-34)

Վախճանարանական տեքստ (Էջ 34-35, խորագիր՝ «Յաղագ Ներին»):

Ազգարանական ծառերին բնորոշ յուրահատկությամբ՝ ձեռազրի ծառն կ ունի վերից վար ուղղություն<sup>5</sup>. սկսելով Աղամից ու Եվայից՝ այն հասնում է մինչև Քրիստոսի խաչելություն: Վերջինիս կից կան առաջալների ու աշակերտների անուններով բոլորակներու: Չարադրվածքը հաճաղատասխանեցված է ծառի կառույցին, այսինքն՝ Էջի երկայնքով, ըստ այդմ՝ տեքստի ամբողջականությունը տեսանելի է միայն ուղղահայաց դիրքով:

Այս թեմայի շրջանակում մենք արդեն դարգել ենք XVII դարասկզբին գրված CBL551 և U10772 օրինակների աղբյուրագիտական հենքը, ճշտել ենք, որ XIV դարավերջից մինչև XIX դար ընկած ժամանակահատվածում ստեղծվել է մոտ 20 «Նամառաւ Աստուածաշուն»<sup>6</sup>: Ըստ նկարագրումների և կառուցվածք՝ դրանք դասակարգել ենք երեք խմբի. Ս խմբի մոդելը մեր այս ձեռագիրն է: Մեր ուսումնասիրությամբ դարձվեց, որ «Նամառաւ Աստուածաշունը» թարգմանական գործ է՝ XII դարավերջի ֆրանսիացի աստվածարան վարդապետ, Փարիզի եկեղեցու դիմանադես Պուտրու Պուտեցու (Lat. Petrus Pictaviensis, մոտ. 1130-1205) «Քրիստոսի ծննդարանության Նամառոտ դատմություն» (Compendium Historiae in Genealogia Christi կամ կարճ՝ Compendium, հայերեն՝ «Նամառոտ Պատմություն») լատիներեն երկի հայերեն թարգմանությունն է: Նայերեն օրինակների համեմատությունը ցոյց է տալիս, որ Պուտեցու գործը հայերեն թարգմանվել է երկու անգամ: Մի դեղքում դահղանվել է մոդելը<sup>7</sup> (Գ խումբ), իսկ մյուս դեղքում, որին դատկանում է նաև մեր քննվող CBL551 ձեռագիրը (Ա և Բ խումբ), առկա է խճրագրական մի քանի շերտ: Ըստ եռլեռամ՝ հայերեն թարգմանությունը կատարվել է Պուտեցու գործի

խմբագրված մի տարրերակից, որը տարրերվում է նոդելից ծառի կառուցվածքով (Քրիստոսի ծննդաբանությունն ընդգծված է Շեսեից, այլ ոչ թե՝ Աղամից, տե՛ս նկ. 1), բովանդակային որոշ հավելումներով (առաքյալների դատկերներ ու վարքեր և վախճանաբանական տեքստ)<sup>8</sup>, ինչողևս նաև դատկերային տարրերով: Պուատեցու գործը հայտնի է տարրեր նկարազարդումներով. մեր CBL551 տարրերակը ևս առանձնանում է դատկերված կերպարների ընտրությամբ և դատկերագրությամբ:

CBL551 ձեռագրի դարագլուխների մասին տեքստը Պուատեցու երկից փոխադրություն է: Այն բաժանված է վեց դարագլուխների, իսկ դարբերացումը համադատախանում է Օգոստինոս Երանելու (Նիղդոնացի) տարրերակին<sup>9</sup>: Դայտնի է, որ Օգոստինոս Երանելին առաջինն է մարդկության դատմությունը բաժանել շրջափուլերի, որի սխեմատիկ դատկերը հետևյալն է.

Աղամից մինչև Զրիեղեղ,

Զրիեղեղից մինչև Արքահամ,

Արքահամից մինչև Դավիթ,

Դավիթից մինչև Բարեկոնյան գերություն,

Բարեկոնյան գերությունից մինչև Քրիստոսի ծնունդ,

Քրիստոսի ծնունդից մինչև հարատև ներկա (Պուատեցու գործը սահմանափակվում է սրանով),

Դանգստյան յոթերորդ օր,

Տերունի հավլիտենական Կիրակի<sup>10</sup>:

Մեր ձեռագրում կիրառված դարագլուխների բաժանման այս տարրերակը հայ մատենագրության մեջ հանդիդում է XII դարից սկսած (Մ1999)<sup>11</sup>, որի աղբյուրն ու հեղինակը մեզ անհայտ են մնում: Ըստ մեր տեքստի՝ առաջին շորս ծամանակարաշխումները համաձայնեցված են Ծննդոց գորքի շրջադարձային անձանց կամ իրադարձություններին՝

I դարագլուխ՝ «Ենովք» (Ծն Դ 17),

II. «Զրիեղեղն» (Ծն Շ 13-Ը 19),

III. «Աշտարակն» (Ծն ԺՄ 1-8),

IV. «Արքահամ» (Ծն ԺԲ 1):

V. «Ի շինուածին տաճարին» դարագլուխը նվիրված է Սոլոմոնի Տաճարի շինությանը (Բ Խթ Շ 1-37), որով դատմագրության մեջ ձևավորվել է Առաջին տաճար հասկացությունը (շրջափուլն ընդգրկում է Ք. Ա. 1006-586 ընկած ծամանակահատվածը):

VI. «Մարմնանալ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի»՝ համարժեք է Քրիստոսի մարդեղացմանը (Մտ Ա 18-25), որը, ըստ դատկերը մեկնաբանող գրության, ավարտվում է Քրիստոսի խաչելությամբ (մեջերումը տե՛ս վերը):

VII «Ըստ ոմանց զկոչումն հեթանոսաց ասեն ի հաւատն Քրիստոսի» դարագլուխը կարող ենք համարել դարձի շրջափուլ: Այն ժամանակային առումով հարատև ներկան է, որի վախճանը հայտնի է միայն Տիրոջը (Գրծ Ս 6-8):

VIII «Գալուստն Քրիստոսի» դարագլուխը խորհրդանշում է Քրիստոսի Երկրորդ Գալուստը. այն վերդատմական է:

Օգոստինոս Երանելու և CBL551 ձեռագրի դարբերացումները ունեն մասնակի տարբերություններ: Ինչողևս Օգոստինոսի, այնպէս կ մեր ձեռագրի տարբերակում VI-VIII դարագլուխները ներառում են Քրիստոսի Ծննդից մինչև Երկրորդ Գալուստ ժամանակահատվածը: Դրանցում վկայակոչված է Ավագ շարաթվա վերջին երեք օրերի խորհրդաբանությունը, որոնք նոյնացվում են օրերին համազոր թվերի հետ<sup>12</sup>:

Տարբերությունը VI «դարի» սահմանագծման մեջ է, որն ըստ Օգոստինոսի՝ մարդկության անժամանակ ներկան է, իսկ CBL551 ձեռագրի դեղքում՝ ավարտվում է Քրիստոսի խաչելությամբ: Տվյալ դեղքում շարաթվա օրերի վկայակոչումը ավելի ընդգծված բնույթ է կրում. վեց թիվը (VI դար) սիմվոլացվելով՝ նոյնացված է խաչելության Ուրբաթ օրվա հետ:

Ինչողևս նշվել է վերը, CBL551 հայերեն օրինակը տարբերվում է Պուատեցու մողելից: Վերջինիս դեղքում դարագլուխները մեկտեղված չեն, այլ՝ յուրաքանչյուր շրջափուլի ավարտի կամ սկզբի մասին հաղորդումը անմիջականորեն նշված է Քրիստոսի ծննդաբանության կենտրոնական ճյուղի վրա<sup>13</sup>: Այսինքն՝ ծառի վրա արված տրոհումներով բանաձևված է բովանդակությունը, բացի այդ, դաստիարակած որոշ կերպարներ կամ տեսարաններ խորհրդանշում են վերը նշված դարագլուխները՝ I. «Դար»՝ Աղամ, II. Նոյ, III. Արքահամ, IV. Դավիթ, V. Սեղեկիսա և VI. Քրիստոսի «Ծննդ»<sup>14</sup>: Ինչողևս նկատում ենք, Պուատեցու մողելով լատինական օրինակներում գեղազարդմանը ցոյց է տրված տեքստի դարբերացման կարևորությունը: Այս իրողությունն այնքան ակնառու է, որ առանձին ուսումնասիրության նյութ չի դարձել: Այնինչ, CBL551 ձեռագրի դարագլուխների բովանդակության կատար այլ սկզբունքով է արված:

CBL551 ձեռագրի սկսեմատիկ մասի՝ ծառի վրա նշված է միայն «Վեցերորդ դարի» ավարտի մասին հաղորդումը, որն ընդունելով որդես ելակետ՝ մտովի կարող ենք նշագծել մնացած հինգ շրջափուլերը: Դրանց անձնավորող կերպարներից դաստիարակած են միայն Աղամը («Մեղագործություն»), Նոյը և Արքահամը (մեղալինում դաստիարակած դիմանկարներ), իսկ Սողոմոնի անունով բոլորակն առանձնանում է զարդամոտիվային ձևավորմամբ: Դրանցից բացի, ծառում առկա են նաև աստվածաշնչյան այլ հանգուցային անձանց դաստիարակներ կամ զարդամոտիվներով բոլորակներ<sup>15</sup>: Նետսարար, նշված դաստիարակները երկրորդաբար են առնշվում դարագլուխներին:

«Վեցերորդ դարը» հատուկ շեշտադրումներ ունի. Քրիստոսի ծննդաբանության կենտրոնական ճյուղից իշխող «Քրիստոս-Էմմանուել» (Եջ 29, նկ. 2) դատկերագրությամբ մեղալիոնին հաջորդում է Քրիստոսի կյանքը դատմող տեքստը՝ ընդմիջվելով «Քրիստոս Մանուկ» գրությամբ զարդամուտիվ-բոլորակով (անմիջապես հաջորդում է Քրիստոսի ծնունդի հաղորդմանը): Մյուս Եջի ներքինի հատվածում «Վշտացյալ Քրիստոս» (Եջ 30, նկ. 3) դատկերագրությամբ մեղալիոնն է, որը մեկնաբանվում է «Վեցերորդ դարի» ավարտի վերաբերյալ վերը նշված գրությամբ: Քրիստոսին նվիրված այս տեքստերն ու դատկերները առանձնացվելով մնացածներից, առնված են շրջանակի մեջ<sup>16</sup>: Ինչողևս նկատում ենք, «Վեցերորդ դարը» սահմանագծվում է «Քրիստոս-Էմմանուել» և «Վշտացյալ Քրիստոս» մերայիններով: Արանցից առաջինը, կարծում ենք, ներկայացնան կարիք չունի, իսկ երկրորդ՝ խաչելության թեմային նվիրվածը, եվրոպական գրականության մեջ ընդհանուր ճանաչում ունենալով Man of Sorrows («Վշտացյալ Քրիստոս»<sup>17</sup>) անունով, հայ արվեստում գրեյք չի հանդիպում:

Ըստ երևույթին՝ Քրիստոսի երկու դատկերների տվյալ հատվածում ի հայտ գալը վերցված են՝ Պուտատեցու մոդելով օրինակներից, որոնցում սովորաբար դատկերված են՝ «Ծնունդի» ու «Խաչելության» տեսարանները<sup>18</sup>: Ինչողևս նշել ենք, ուսումնասիրողները «Ծնունդը» դիտարկում են նաև դարագլուխներով, որը կփորձենք ցույց տալ ստորև:

Ըստ Հանս Բելլինգի ուսումնասիրության<sup>19</sup> եվրոպական արվեստում XIII-XIV դարերից յայն կիրառություն գտած «Վշտացյալ Քրիստոս» դատկերը նախադեմ ծիսական գործառույթ է ունեցել. այն, ծնունդ առնելով բյուզանդական եկեղեցական միջավայրում, ծառայել է Ավագ Ուրբաթի արարողակարգին: CBL551 ձեռագրի տարբերակը դատկերագրության դասական օրինակ է. Քրիստոս դատկերված է մինչև գոտկատեղը, դիմահայաց, գլուխն ուսին հակած, ձեռքերը կրծքին խաչած, խաչաքն լուսատակով, աշքերը փակ, ձեռքերին գամերից առաջացած վերքեր, կողը՝ տեգով խոցված<sup>20</sup>: Նրա հետևում խաչափայտի հորիզոնական թևն է: Միակ տարբերությունն այն է, որ ձեռքերը որովայնին խաչելու փոխարեն խաչած են կրծքին: Հանս Բելլինգը, դրան եական արժեք շտալով, համարում է դատկերագրության մեկ այլ տարբերակ:

Ծիսական գործառնության դեմքում դատկերը զուգակցվել է հիմնականում Տիրամայրը մանկան հետ դատկերով՝ մեկտեղվելով երկողմանի կամ երկ-փեղկ սրբադատկերում<sup>21</sup>: Այդ բաղադրյալ սրբադատկերի խորհուրդը օրվա ար-

արողակարգին համակցող ծնունդի և մահվան հակադրության ստեղծումն է եղել: Մեր օրինակում նոյնական տվյալ խորհուրդն արտահայտված է նշվածին հավասարազոր համարժեքներով: Չենք բացառում նաև այն վարկածը, որ դա կարող է լինել նախատիր մի տարբերակի հետագա վերաբերում:

CBL551 ձեռագրի աղբյուրագիտական քննույթամբ մեջ անդրադառնալով հիմնական դատկերային տարրերին և ծանի համակարգման կառուցվածքին, ինչպես նաև «Վշտացյալ Քրիստոս» մանրանկարի առկայությամբ համոզվում ենք, որ դրամբ ներմուծված են լատինական աղբյուրից<sup>22</sup>: Այս տարբերակով լատիներեն բնօրինակը հավանական է, որ ի հայտ է եկել XIII-XIV դդ.: Ինչպես նշվել է, «Վշտացյալ Քրիստոս» դատկերը, անցնելով արևմտյան արվեստ, կորցրել է նախնական ծիսական գրքառույթը: Բացի այդ, «Նամառու Պատմության» տվյալ հատվածի համար հայտնի էին ավելի դարզ մշակումներ («Ծնունդի» և «Խաչելության» դատկերներ), որոնք գրեթե անփոփոխ կերպով կրկնվում են լատինական նկարագրի օրինակներում:

Քննվող դատկերների կիրառությունը ցույց է տալիս, որ խճքագրիչը միտումնավոր է դիմել ծիսական տարբերակին՝ նորատակ ունենալով վկայակութել Ավագ Ուրբաթի՝ վեց թվի («VI դար») խորհրդարանությունը:

Ինչպես արդեն ասացինք, «Յոթերորդ դարը» դարձի շրջափուլն է: Դարձի գործնարար սկզբունքը կարող է Գործը Առաքելոցում, իսկ հետագայում կ առաջանարկի վարքերը հիմնականում գրվում են քարոզչական գործունեության շուրջ: Ըստ Էռյան, այս ընկալման դրսուրումն է Եղիշե վարդապետի «Յոթերորդ դարի» սահմանումը՝ «...և ամուսմք եօթներեկին՝ որ է կոյս և անծին ՚ի մահկանացու գոյացութեանց, և քազմածնունդ առանց ախտիցն շարշարանացն, զայն գորութին շնորհեաց երկուտասան Առաքելոցն, որով զաշխարհս յարդարեսցեն և կազմեսցեն ՚ի վեցիցն ՚ի դարն եօթներորդ...»<sup>23</sup>:

Մեր ձեռագրում «Վեցերորդ դարի» եզրագծից ներքև ուղղահայաց դասավորությամբ առաջալների ու աշակերտների մեղալիոնների մեջ դատկերված դիմանելարմներն են ու դրանց ուղեկցող վարքերը (զուն. դատկ. 14): Ավետարանական տասնմեկ առաջալներից բացի, շարքում ընդգրկված են Շուղային փոխարինած Մատաթիասը, տասներեքերորդ առաջալի համարում ունեցող Պողոսը և յոթանասուն աշակերտներից Շովսեփ-Քառնարասն ու Ալփեռսի որդի Բառնարասը: Նրանց զլսավորում է Օքանտ Տիրամայրը մանկան հետ մեղալիոնի մեջ զետեղված դատկերը:

Ինչպես նշվել է վերը, այս հատվածը հետագայի հավելում է: Այդուհանդեռձ, առաջալների ու աշակերտների՝ տեքստի մեջ ընդգրկվելը վերցված է Պուատեցու մոդելով օրինակներից: Դրանցում լսան դասավորության՝ նրանց անվանակիր բոլորակները ժամանակագրորեն համադատասախանեցված են

Քրիստոսի ժամանակաշրջանին, և նրանցից շատերը սերում են Աստվածածնի մայր Աննայի ազգածառից (Քրիստոսի ազգակցությունը մայրական գծով է)՝<sup>24</sup>: Այդ համակարգը նոյնությամբ փոխադրված է CBL551 ձեռագրի մեջ (տե՛ս նկ. 3):

Լատինական տվյալ գուգադրությունը համաձայնեցում ենք դարագլուխների հետ. առաջյալներով ու աշակերտներով ցոյց է տրված Օգոստինոսի սահմանած «Վեցերորդ դարի» շարունակականությունը: CBL551 ձեռագրում նոյն գործառույթը վերապահված է առաջյալների ու աշակերտների երկրորդ ձևակերպմանը (դիմանկարներ ու վարքեր)<sup>25</sup>: Այստեղ առաջյալների ու աշակերտների դիմանկարները ներկայանում են որպես «Յոթերորդ դարն» անձնավորող կերպարների դաստիքային արտահայտություն:

Սակայն թե՛ Պուատեցու մողելով օրինակներում և թե՛ մեր խմբագրված տարբերակում (CBL551) առաջյալներն ու աշակերտները դրվում են միևնույն հարթության վրա: Սրանով է դայմանավորված, որ տասներկու թիվը կորցնում է իր խորհրդաբանությունը, որը վերահմաստավորվում է տասնինգ թվի մեջ:

Տասնինգը հանդիդում է «Դատաստանից առաջ տասնինգ նշանների» լեզենդում<sup>26</sup>: Վերջինս ամոփում է Ների վախճանը նախանշող տասնինգ օրերի ընթացքում կատարվելիք նշանները՝ արտահայտված բնական աղետների և քառային իրադարձություններերի տեսքով:

Ինչու նշվել է թեմատիկ բաժանման մեջ, առաջյալներին ու աշակերտներին հաջորդում է «Յաղագու Ներին» խորագրով վախճանաբանական տեսար: Ձեռագրի դարբերացման մեջ այն որևէ գործառույթ չունի, քանի որ «Յոթերորդ դարի» ձևակերպման մեջ վկայակոչվում են առաջյալները, և ինչու տեսնում ենք, նրանց հատուկ կարևորություն է տրված, իսկ «Ութերորդ դարի» համար ունենք այլ համարժեք (տե՛ս ստորև): Նետևաբար, վախճանաբանական տեսարը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Տասնինգ նշանների» եզրափակումը:

Կարծում ենք, մեր ձեռագրում տասնինգ նշանները առաջյալների այլաբանությունն են. «Տասնինգ նշաններում» նկարագրվող յուրաքանչյուր օրվա աշխարհակործան երևույթները հավասարագոր են առաջյալներին ու աշակերտներին:

«Ըստ Էնթյան, «Տասնինգ նշաններին» հղելու միտքը Պուատեցուն է: Մեր նմանօրինակ դիտարկումը դայմանավորված է այն բանով, որ «Տասնինգ նշանների» լեզենդի հեղինակներից մեկն է Պետրոս Պուատեցու ժամանակակից և ֆրանսիացի հռչակավոր աստվածաբան Պետրոս Կոմեստոր (Petrus Comestor «Արոլաստիկայի դատմություն»)»<sup>27</sup>:

Մեր ձեռագիրը Պետրոս Պուատեցու մտահղացման դարձեցված տարբերակն է:

«Ութերորդ դարը»՝ Երկրորդ Գալուստը, խորհրդանշվում է «Երկնային Երուսաղեմ» մանրանկարով (գուն. դաստկ. 13):

Մանրանկարը կազմված է երկու մասից՝ վերևում Սուրբ Երրորդությունն է, ներքևում՝ Դրախտի տեսարանը: Վերջինս ամփոփում են ոճավորված ուժ ծաղկած ծառեր, Դրախտի շորս գետեր ու բուսականություն: Գետերը ծառաբների մոտով հոսում են ժայռային գոգավորությունների մեջ:

Երկրորդ Գալստյան թեմատիկան երբեմն հանդիպում է Պուտառեցու մողելով լատինական օրինակներում, որոնցում կիրառված է հրեական յոթնաջահը կամ Նարության տեսարանը<sup>28</sup>: Նայկական տարրերակների քննությունը ցույց է տալիս, որ Երկրորդ Գալստյան դատկերային արտահայտությունը «Նամառաւս Աստուածաշնչի» տեքստ ներմուծվել է CBL551 ձեռագրի միջոցով, որից արված ընդօրինակությունները տարրերվում են մասնավորապես նշված մանրանկարով՝ կազմելով մեր կողմից առանձնացված ձեռագրերի Ա խումբը<sup>29</sup>:

Այս մանրանկարը առաջին հայացքից դուրս է ձեռագրի ժամանակագրական համակարգումից. տրամաբանորեն այն դիտի հաջորդեր «Յաղագս Նեղին» վախճանաբանական տեքստին, սակայն տեղադրված է տեքստի սկզբում:

Եթե CBL551-ից անկախ ընդօրինակություններում վախճանաբանական տեքստը վերացական կերպով նախանշում է Երկրորդ Գալստյան, աղա այստեղ այն ձևակերպված է համադատասխան ինաստային շեշտադրմանը. մանրանկարը բովանդակելով Երկրորդ Գալստյան վախճանաբանական դատկերը՝ անմիջապես առնշվում է ութ թվի՝ որդես Տիրոջ ովերորդ օրվա Երկնային թագավորության հաստատման գործառությին<sup>30</sup>: Պատահական չէ, որ Դրախտի տեսարանում ծառերի թվաքանակը նույնութեան ուժի է հասցված:

Ինչու նշվել է, Ութ թիվը («VIII դարը») համադատասխանում է Կիրակի օրվա խորհրդին: Ըստ անվանաբանական մեկնաբանության՝ Կիրակին Տերունական օրն է, որի հիմքում Տիրոջ Նարության խորհուրդն է և այն համարվում է շաբաթվակիրք<sup>31</sup>: The Week ուսումնասիրության հենինակ Քոլսոնը երևույթը մեկնաբանում է շաբաթական ցիկլի քրիստոնեական յուրացմանը<sup>32</sup>, որում 7+1 դարրերականությամբ ուժերորդ օրը համարվում է նոր սկիզբ, այսինքն՝ առաջին օր: Այս տեսակետի աստվածաբանական մեկնությունն ենք համարում Շովիան Օձնեցու «Ի խորհուրդն նոր Կիրակիի» գործի հետևյալ ձևակերպումը՝ «Առ, փոխեցաւ յեկանցն ի վերոյ եւ եղեւ ութ, քատ քանին տեսան «Ես եմ առաջին եւ եմ վերջինն,...»»<sup>33</sup>:

Կարծում ենք՝ մեր ձեռագրում «Երկնային Երուսաղեմ» մանրանկարի տեղադրությունը հայտանշում է ութ թվի խորհրդաբանության նշված ընկալումը:

Այս հոդվածով փորձեցինք CBL551 ձեռագրի և նրա լատիներեն նախօրի-

նակ Պուատեցու մոդելի հետ զուգահեռ քննությամբ ցույց տալ, թե դարավոլս-ների տեքստը ինչ փոփոխության է ենթարկվել, ինչ դատկերային մեկնարանություն է ստացել հայերեն տարբերակում:

Այսդիսով, եզրակացնում ենք, որ CBL551 ձեռագրում այնքան է կատարելագործված դարավոլսների և բովանդակության կատը, որ մեր ձեռագրի գրիշ ու մանրանկարիշ Շովհաննեսի կողմից հավելվելով ութ թվին («VIII դարին») համարժեք դատկերագրությունը, ամբողջացվել է այդ համակարգը: Մրանից բացի՝ դարավոլսներով ենք դայմանավորում առաջալների ու աշակերտների դիմանկարների ու վարքերի և վախճանաբանական տեքստի հավելումները, որոնց անդրադարձել ենք «Յոթերորդ դարի» համատեքստում:

Լատինական տարբերակների օրինակով, դարավոլսների համատեքստում դիտարկելով CBL551 ձեռագրի ծառն ու մանրանկարները՝ հանգեցինք այն տեսակետին, որ մեր ձեռագիրը առանձնահատուկ է մի քանի առումներով: Դաին՝ դարավոլսների մեկնարանության համար ծառի գործառույթը հետ է մղված, և փոխարենը կարևորված են մանրանկարները: Դրանք խիստ գործառնական բնույթ ունեն, որի դատճառով առաջին հինգ դարավոլսներից ոչ բոլորն ունեն դատկերային արտահայտություն: Այսինքն՝ միայն դարավոլսների տեքստում սիմվոլացված թվեր են համարժեք դատկերային մեկնարանություն են ստացել: Դրանց շարքում «Երկնային Երուսաղեմ» և «Վշտացյալ Քրիստոս» դատկերներին ոչ խորային տեքստի գործառույթ է վերապահված:

Անդրադառնալով դարավոլսներում սիմվոլացված թվերի դատկերային համարժեքներին, ցույց ենք տվել, որ

«Եմանուել-Քրիստոս» և «Վշտացյալ Քրիստոս» դատկերների համադրությունը մեկնարանում են Վեց թվի («Վեցերորդ դարը») խորհրդաբանությունը Ավագ Ուրբաթի համատեքստում:

Առաջալների ու աշակերտների դիմանկարները ներկայանում են որդես նշաններ, որոնց դեսք է հաջորդի Ների վախճանը: Դավելենք, որ «Յոթերորդ դարը», ըստ մեր վարկածի, արված է «Տասնինգ նշանների» լեզենդի տիղաբանությամբ: Մրանով է, որ սահմանավորում է դարձի շրջափուլի կամ Տարատև Շարայի (VII օրվա) անընդգրկելիությունը:

«Երկնային Երուսաղեմի» ընտրված դատկերագրությունն ու մանրանկարի տեղադրությունը ընդգծում են Երկրորդ Գալստյան (ութ թվի)՝ որդես նոր աշխարհի սկզբի և ութի՝ որդես առաջին օրվա ընկալման փոխկապակցվածությունը:

- Դուրլիմի Չեսթը Բիթի գրադարանի թիվ 551 ձեռագիր ուսումնասիրության և թվային էջերի ձեռքբերման համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Գալուստ Գյուղեմյան հիմնադրամին ("Armenian Studies: Short Term Grants for PhD"):
- Ձեռագիր մկարագրությունը տես S. Der Nersessian, *The Chester Beatty library, A Catalogue of the Armenian Manuscripts*, v.1.Text, Dublin, 1958, pp. 4-7: Մանրանասն մկարագրությունը տես մեր հոդվածում. Ա. Սարգսյան, «Հովհաննես գրչաղետի աշխատասիրած Ղամառաւս Աստուածաշունչ ձեռագրերի (CBL551 և U10772) աղյուղագիտական հենքը», *Բաներ Մատեմադրամի*, թիվ 23, 2015, էջ 151-172:
- Դարավոլվածներին նվիրված տեքստերը հիմանականում հանդիրում են տոմարագիտական և աստվածաբանական երկերում:
- Ղմբ. Յու Ի 1-7:
- Gerhart B. Ladner, "Medieval and Modern Understanding of Symbolism: a Comparison", *Speculum: A Journal of Medieval Studies*, Vol. 54, No. 2 (Apr., 1979), p. 246.
- Աղյուղագիտական քննության համար մանրանասն տես մեր նշված հոդվածը:
- Դեսրոս Պուատեցու գործի բնօրինակը վերականգնվել է Երան ավելի մոտ կանգնած ժամանակաշրջանի ընդօրինակություններով: Այս դաստիճով՝ լատինական նոյնատիպ ձեռագրերի համար կօգտագործենք Պուատեցու մողել անվանումը (Պուատեցու երկի մասին տես P. Moore, *The Works of Peter Poitiers: Master of Theology and Chancellor of Paris (1993-1205)*, Indiana, 1936, pp. 97-117):
- Տեքստային առումով նշված հավելումներից բացի, CBL551 ձեռագիրը ֆիլիմ Սուրի դասակարգած «Ղամառու դասմության» (Compendium) «Ստանդարտ» (Standart) տարբերակը չէ, այլ՝ «Երկար» (Long), որը դարձնակալում է «Սրբաւատիկայի դասմություննեց» (Historia Scholastica) քաղվածքները (տես P. Moore, *The Works...*, p. 100):
- Սուրբ Օգոստինոսի Յաղաց քաղաքի Աստուծոյ, Վենետիկ, Սր. Ղազարի տղարան, 1844, գլուխ I, էջ 660- 666:
- Տես նոյն տեղում: Օգոստինոսի դարբերացման մեկնաբառության համար մանրանասն տես P. Underwood, "The Fountain of Life in Manuscripts of The Gospels", *Dumbarton Oaks Papers*, No. 5, Cambridge: Massachusetts: Harvard University Press, 1950, pp. 83-88:
- Ջ. Էյմարյան, «Պատճեն Տումարի» (Է-ՃԵ դր.), թ՛Անուիմ և բնագրեր, Եր., 2002, էջ 166:
- Ղայկական մեկնաբառությունների մասին տես R. W. Thomson, "Number Symbolism and Patristic Exegesis in Some Early Writers", Ղանդէ Անսորեա, 1976, էջ 117-130, տես նաև P. Underwood, "The Fountain...", pp. 83-88:
- W. H. Monroe, "A Roll-Manuscript of Peter of Poitiers' Compendium", *The Bulletin of the Cleveland Museum of Art*, 65 (1978), p. 92: A. Worm , 'Ista est Jerusalem' Intertextuality and Visual Exegesis in Peter of Poiteries' Compendium historiae in Genealogia Christi and Werner Rolevinck's Fasiculus Temporum, p. 125, 150.
- W. H. Monroe, "A Roll-Manuscript..." pp. 92-98; A. Worm, " 'Ista est Jerusalem'..." pp. 150-151.  
«Ծնունդի» համար տես նաև 1. München, Bayerische Staatsbibliothek, BSB Clm 19414, 376r, (Biblia quaedam pauperum 'Legitur in Genesi, 1330)-<http://daten.digitale-sammlungen.de/~db/0007/bsb00079104/images/index.html?id=00079104&groesser=&fip=193.174.98.30&no=&seite=384> (18.02.2016, 14:44); 2. Barcelona, Universidad, MS 762, 7v (Biblia, XIV-XV), <http://www.lluisvives.com/servlet/SirveObras/03692846455795884532268/ima0013.htm> (18.02.2016, 14:50); 3. Paris, Biblioth-que nationale de France, Lat. 15254, 9r (Schéma généalogique et historique, 1300)-<http://visualiseur.bnf.fr/Visualiseur?Destination=Mandragore&O=07867166&E=1&l=72239&M=imageseule> (18.02.2016, 15:00); 4. Cambridge, Corpus Christi College, MS 83, 7v (Peter of Poitiers, Genealogia historiarum, 1250)-[https://parker.stanford.edu/parker/actions/thumbnil\\_view.do?size-basic&ms\\_no=83&page=7V](https://parker.stanford.edu/parker/actions/thumbnil_view.do?size-basic&ms_no=83&page=7V); 5. London, British Library, Royal MS 14 B IX (Peter of Poitiers, Compendium....,XIII)-<http://www.bl.uk/catalogues/illuminatedmanuscripts/record.asp?MSID=18450&CollID=16&NStart=140209> (18.02.2016, 15:27); 6. Baltimore, Walters Art Museum, W796, 4r (Peter, of Poitiers,

Compendium historiae in genealogia Christi, ca. 1130-1205)-[http://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/W796/data/W.796/sap/W796\\_000013\\_sap.jpg](http://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/W796/data/W.796/sap/W796_000013_sap.jpg) (18.02.2016, 15:32); 7. Philadelphia, Free Library, Rare Book Department Lewis E 249 a,b (Peter of Poitiers, Compendium..., 1275-1299) <http://libwww.freelibrary.org/medievalman/detail.cfm?searchKey=1998781017&ItemID=mca249001a> (18.02.2016, 16:33); 8. München, Bayerische Staatsbibliothek, BSB Clm 8201,107r (Mettener A, rmen-bibel (Biblia pauperum, 1414-1415)- <http://daten.digitale-sammlungen.de/~db/0004/bsb00040329/images/index.html?id=00040329&groesser=&fip=193.174.98.30&no=&seite=217> (18.02.2016, 14:12):

- 15 Տես մեր նշված հոդվածը:
- 16 Նոյն տեղում:
- 17 Լեզվական և մշակութային տարբեր միջավայրերում դատկերագրական տիրոյի անվանումը ինաստային է. օրինակ, գերմաներենում անվանումն այսպիս է Erbärmdebild (քառացի թարգամնթյամբ՝ Ողբի դատկեր), հունականում Akra Topeinosis (քառացի՝ ծայրագույն խոնարհում (Utmost Humiliation, Ես ԾԳ 8)), իտալերենում Cristo Pieta (քառացի՝ Ողբի Քրիստոս): Հայ արվեստում դատկերը կիրառություն չի գտել, որի դատճառով թարգմանությունը “Man of Sorrows” ավելի լայն ձանաշում ունեցող տարբերակից է արված (“Man of Sorrow” անվանման քացատրության համար տես G. Schiller, *Iconography of Christian Art*, V. 2, Lund Humphries London, Great Britan, 1972, p. 200).
- 18 Տես 13 ծնր.:
- 19 Տես H. Belting, “An Image and Its Function in the Liturgy: The Man of Sorrows in Byzantium”, *Dumbarton Oaks Papers*, no. thirty-four and thirty-five, Dumbarton Oaks Center for Byzantine Studies, Washington, 1980-1981, pp. 1-12; տես նաև G. Schiller, *Iconography...*, pp. 196-230:
- 20 Նոյն տեղում:
- 21 Նոյն տեղում: Գերտրուդ Շիլերը նշում է նաև «Պահտուկրատոր Քրիստոս» և «Վշտացյալ Քրիստոս» համարդությունը (այս մասին տես G. Schiller, *Iconography...*, p. 200):
- 22 Մարդաբան տես մեր նշված հոդվածը:
- 23 Եղիշի վարդապետի, Մատենագիտութիւնը, Վենետիկ, Սր. Ղազարի տողարան, 1859, էջ 324: Չնայած Եղիշի վարդապետի մոտ «Յնթերորդ դարի» ընկալումն ավելի մոտեցած է Օգոստինոսի դատկերացմանը, այնուամենայնիվ, գաղափարը մենք է՝ Երկրորդ Գալստյան նախաղատրաստում, որը հայտանշվելու է առայլաներով:
- 24 Տես 13 ծ.:
- 25 Ինչպես նշվել է, աշակերտներից մի քանիսը (Հակոբոս Սեծ, Հովհաննես Ավետարամիչ, Հակոբոս Փոքր, Սիմոն, Թաթեսոս կամ Հուդոյա, Բատնարաս) սերում են Աննայի ազգածանից, հետևաբար նրանց անուններով բոլորակները ջնուղավորվում են Աննայից: Արանով է դայնանավորված երկրորդ ծևակերպման մեջ նրանցից յուրաքանչյուրի դիրքը. Պետրոսից հետո առաջնությունը հիմնականում տրված է Քրիստոսի ազգական առաջանակին: Բացի այս, վարքերը համաձայնեցվելով Աննայի ազգածանի, լատինական ավանդույթին են դատկանում:
- 26 M. Stone, *Sign of the Judgement, Onomastica Sacra and The Generations from Adam*, University of Pennsylvania: Scholars Press, 1981, pp.3-57.
- 27 Նոյն տեղում, 3-5: Պետրոս Պուատեցու կյանքի ու գործերի հանահավաք ուսումնասիրության հեղինակ Ֆելիխ Մուլը աղացուցում է, որ 1169 թվականին Փարիզի համալսարանի գլխավոր աստվածաբանի դաշտում Պետրոս Կոմեստորին հաշորդել է Պետրոս Պուատեցին: Ինչուն նաև, ուսումնասիրողների դմոնամբ՝ «Սրբաւանիկայի դատմության» «Գործ Աստեղոց» հատվածի հեղինակը Պետրոս Պուատեցին է (այս մասին տես P. Moore, *The Works...*, 1-23, 119-122):
- 28 Lyon, Bibliothèque Municipale, Ms 863 (Histoire sainte abrégée, 1210)-[http://numelyo.bm-lyon.fr/f\\_view/BML:BML\\_02ENL01001Ms8632541&0=Relevance&quick\\_filter&BML:BML\\_02ENL01001COL0001&Array](http://numelyo.bm-lyon.fr/f_view/BML:BML_02ENL01001Ms8632541&0=Relevance&quick_filter&BML:BML_02ENL01001COL0001&Array) (19.02.2016, 17:38); Paris, Bibliothèque nationale de France, Lat. 14435, 141v (Postille super Matheum, Johannem et Marcum. Pictavensis, Compendium historie in genealogia Christi, 1201-1300-<http://gallica.bnf.fr/ark:/12148/btv1b9066760h/f143.item> (19.02.2016, 17:47); Տես նաև 13 ծնր.:
- 29 «Երրորդ խմբագրիչը» CBL551 ձեռագրի գրիչ ու մանրանկարիչ Հովհաննեսն է, որը հավելել է

- «Երկնային Երուսաղեմ» մանրանկարը և կատարել է զարդանկարչական մի շարք հարդարումներ, ինչպես նաև ոճական փոփոխության է ենթարկել դիմանկարները (այս մասին տես մեր նշված հոդվածը):
- 30 Ղմբ. Սուրբ Օգոստինոսի Յաղագու..., էջ 660- 666:
  - 31 Նոր բաղդիք Յայկազեամ լեզուի, հն. 1, Կենետիկ, Ար. Դազարի տղարան, 1836, էջ 1100:
  - 32 F. H. Colson., *The Week: An Essay on the Origin and Development of the Seven-day Cycle*, Cambridge; University press, 1926, pp. 87-107.
  - 33 Յոհան Ալձնեցի, “Ընթերցուածոց մեկնութեն. Ի խորհուրդն Նոր Կիլակեհմ”, *Մատենագիրը Յայց*, հն. Է, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 116:

## THE NUMBER SYMBOLISM IN THE CHESTER BEATTY LIBRARY'S MANUSCRIPT “ABRIDGED BIBLE” (NUMBER 551)

ANUSH SARGSYAN

*PhD student*

*Matenadaran*

CBL551 "Abridged Bible" contains a text concerning Ages of the World according to which the manuscript is divided into 8 periods. The analyses, corresponding to the last three periods including the Sixth, the Seventh and the Eighth Ages, show that the Ages are symbolized, thus identified with the meaning of the last three days of the Holy Week. The article explains that some miniature elements are connected with these symbolized numbers. Thus, the lockets picturing Emanuel Christ and Man of Sorrows introduce the symbol of the number 6 in the context of Holy Friday, the lockets picturing apostles personalize the 7th century, and the manuscript "Heavenly Jerusalem" introduces the 8th century, that is the Second Coming as a beginning of a New World.


## СИМВОЛИКА ЧИСЕЛ В МИНИАТЮРЕ ‘КРАТКАЯ БИБЛИЯ’ БИБЛИОТЕКИ ЧЕСТЕР БИТ (НОМЕР 551)

АНУШ САРГСЯН

*аспирант*

*Матенадаран*

CBL551 ‘Краткая Библия’ содержит в себе текст касающийся целой эпохи, согласно которой эти рукописи разделены на восемь циклов. Анализ последних трёх циклов(веков)-шестого, седьмого и восьмого, показывает, что, символизируясь, они отождествляются с тайной последних трех дней Страстной Субботы. В статье показано, что некоторые элементы миниатюры связаны с этими символизированными числами. Медальоны в которых изображены Эммануил Христос и Скорбный Христос в контексте Страстной Пятницы, разъясняют смысл числа „6..“ Медальоны с изображением апостолов , олицетворяют Седьмой век, а картина ‘Небесный Иерусалим’, на полном листе, символизирует Восьмой цикл – Второе Пришествие, как символ начала Нового мира.



Ակ. 1- CBL551 էջ 16, 17-1. Ելից Տաճաղարի 42 օթևանների անուններով տախտակ, 2. Վկայության տաղանակն ու նրան շրջապատող կտապահների ու կարյալների ու կարյալների ցեղերի առյուսակ, Վերկի մեղալիոնում դատավարված է Բենիամինը, Շերքելիմում՝ Դավիթ թագավորը, հատվածների ծանրից



2 CBL551, էջ 29. «Քրիստոս-Եմմանուլ»



3

CBL551, էջ 30. «Վշտացյալ Թրիստոս», աչ կողմում առաջալների ու աշակերտների անուններով բոլորակներ